ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԺԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ

Լիլիթ Պողոսյան

Հայ կաթողիկե և Հռոմեական կաթոլիկ եկեղեցիների ժամանակակից պատմության նշանավոր դեմքերից է Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանը (իտալերեն՝ Agagianian Gregorio Pietro): Նրա կենսագրականի ուսումնասիրությունը կլրացնի հայազգի նշանավոր գործիչների մասին տեղեկատվության տարածման անհրաժեշտությունը: Մեր նպատակն է այս հոդվածի շրջանակում տեղեկություններ հրապարակել նշանավոր հայ կարդինալի պատրիարքական գործունեության և նրա հովվական այցելությունների մասին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս մասին ուսումնասիրությունները գրեթե բացակայում են, և վերջին քսան-երեսուն տարիների ընթացքում սակավ են լուսաբանվել:

Հայոց ազգի Մեծ եղեռնից հետո, երբ պատմական Հայաստանից մնացած փոքրիկ հողակտորի վրա, սովետական իշխանությունները գիտակցաբար փորձում էին վերացնել ազգային եկեղեցին, սփյուռքում հայ եկեղեցին և համայնքը ջանում էին իրենց շուրջ հավաքել թուրքական յաթաղանից մազապուրծ հայորդիներին: Խորհրդային Միությունում սկըսված ստալինյան համատարած հետապնդումների և բռնությունների ժամանակ Վրաստանի տարածքում ևս տեղի ունեցան հայ կաթոլիկ կղերականների համատարած ձերբակալություններ, նրանց մեծ մասը շինծու, հատկապես լրտեսության մեղադրանքներով աքսորվեցին Սոլովկի կղզի, Արխանգելսկ և այլ աքսորավայրեր: Մի մասն ստիպված է եղել հրաժարվել հոգևորական լինելուց, սակայն դա չի խանգարել, որ ծպտյալ վարեն իրենց գործունեությունը: 1936-1937 թվականներին Ջավախքում սաստկացան հալածանքներն ու ճնշումները, որին զոհ գնաց ավելի քան 2500 մարդ՝ մեծ մասամբ ուսյալ և նշանավոր մարդիկ[1]:

Հայ կաթոլիկներին առավելապես աքսորել են իբրև «Վատիկանի գործակալներ»: Ար. Սիմավորյանը և Վ. Հովյանն իրենց աշխատության մեջ փաստում են, որ միայն «Վատիկանի գործակալ» լինելու հանգամանքը չէր աքսորելու պատճառը (դա հորինված պատճառ էր), ինչպես պըն-

Հոդվածը ներկայացվել է 19.02.2019 թ., գրախոսվել է 24.03.2019 թ., ընդունվել է տպագրության 21.06.2019 է.:

[1] **Զուռնաջյան Ս.,** Ջավախք, Ժամանակագրություն, Եր., 2002, էջ 117:

դում են հայ կաթոլիկները, նրանց թվում էին կրթամշակութային և հասարակական գործունեություն ծավալող գործիչներ, նախկին դաշնակցականներ կամ հնչակյաններ[1]: Այս հանգամանքը մեկ անգամ ևս հաստատում է այն, որ Ջավախքի հայ կաթողիկե հավատացյալները նույնպես ունեին իրենց քաղաքական կողմնորոշումը և հայության ազգային խնդիրներով մտահոգված մարդիկ էին, այլ ոչ թե տարադավան օտար զանգված, ինչպես շատ դեպքերում, ցավոք, նրանց համարում էին:

Խորհրդային իշխանությունները եկեղեցու և ժողովրդի միջև եղած հոգևոր կապերն արմատախիլ անելու նպատակով որոշում ընդունեցին փակել դեռևս գործող եկեղեցիներն ու մատուռները: Բացառությամբ Տուրցխ[2] գյուղի եկեղեցու, մնացած բոլոր եկեղեցիները վերածվեցին ցորենի ամբարների, իսկ դրանց պատկանող գույքի մեծ մասն առգրավվեց:

Կարինից գաղթած և հայաշատ Ախալցխայում հաստատված Հարություն Աղաջանյանի ընտանիքում 1895 թ. սեպտեմբերի 18-ին ծնվել է Ղազարոս Աղաջանյանը: Ղազարոսը նախնական կրթություն ստացել է Կարապետյան ծխական դպրոցում: 1906 թ. հոկտեմբերին Սարգիս Տեր-Աբրահամյանը տարրական կրթություն ստացած 11-ամյա Ղազարոսին ուղարկում է Իտալիա՝ Հռոմ՝ ուսումը շարունակելու: Փայլուն առաջադիմությամբ ավարտելով վարժարանը՝ Ղազարոսը ուսումը շարունակում է Ուրբանոս VIII պապական համալսարանում (Pontificia Universita Urbaniana), այնտեղ ուսումնասիրելով փիլիսոփայություն և աստվածաբանություն: 1917 թ. դեկտեմբերի 23-ին 22 տարեկան հասակում Ուրբանյան վարժարանում Պետրոս Արք. Գոյունյանի ձեռքով նա ձեռնադրվում է քահանա՝ վերցնելով Ֆրանցիսկոս անունը: 1921 թ. սեպտեմբերի 10-ին Լևոնյան վարժարանի տեսուչ գերապատիվ Սարգիս Տեր- Աբրահամյանի առաջարկով Աղաջանյանը վերադառնում է Հռոմ և նշանակվում վարժարանի փոխտեսուչի պաշտոնում, որպեսզի օժանդակեր իր ուսուցչին: Նրա ուսուցիչը վարժարանի հուշամատյանում Աղաջանյանի վերաբերյալ գրել է. «Բարի եւ ուսեալ է. թող օրհնէ Աստուած զինք, որ Մեծաւորաց ի-

---

[1] **Սիմավորյան Ար., Հովյան Վ.,** Ջավախահայության որոշ հիմնախնդիրներ, Եր., 2009, էջ 20:

[2] Ստալինյան բռնապետության տարիներին իշխանությունները ցանկացել են գյուղի եկեղեցին, ինչպես հարևան շատ այլ բնակավայրերում, վերածել պահեստի, սակայն տուրցխեցիներն ընդդիմացել են, և եկեղեցին շարունակել է գործել: **Կարապետյան Ս.,** Ջավախք, Երևան, 2006, էջ 505:

րեն վրա դրած գեղեցիկ յոյսերը պսակէ»[1]: 1932 թ. հոկտեմբերի 4-ին Ֆրանցիսկոս Աղաջանյանն ընտրվում է Լևոնյան վարժարանի տեսուչ: Պիոս ԺԱ պապը նրան շնորհում է «Գաղտնի Սենեկապետի» պատվաստիճան:

1935 թ. հուլիսի 21-ին Ֆրանցիսկոս Աղաջանյանին Տեր-Աբրահամյանը ձեռնադրում է եպիսկոպոսի աստիճան Լևոնյան վարժարանի սբ. Նիկողայոս եկեղեցում: Ապա Պիոս ԺԱ Պապի կողմից նշանակվում է Լիբանանի Զմմառի պատրիարքական միաբանության հոգևոր վերակացու: Նույն թվականի օգոստոսի 8-ին հասնում է Բեյրութ Զմմառի վանք և օգոստոսի 20-ին նախագահում 1934 թ. կանոնադրությամբ սահմանված Զմմառի վանքի վարչության առաջին ընտրությունը: Հոկտեմբերի սկզբին վերադառնում է Հռոմ շարունակելով իր ծառայությունը և ուսուցչությունն Ուրբանյան վարժարանում:

Իր եպիսկոպոսության երկու տարին լրանալուց հետո 1937 թ. Հայ Կաթողիկե եպիսկոպոսների հետ Բեյրութ է հրավիրվում Հայ կաթողիկե եկեղեցու երջանկահիշատակ Արփիարյան կաթողիկոսի մահից հետո Տանն Կիլիկիոյ Աթոռի գահակալ ընտրելու առիթով: Նոյեմբերի սկզբին ընտրություններից առաջ երկու ուրիշ եպիսկոպոսների հետ, Աղաջանյան եպիսկոպոսը հանդիպման է եղել Պիոս ԺԱ պապին: Եվ վերջինս ակնարկելով Բեյրութում սպասվող առաջիկա պատրիարքական ընտրություններն ասել է. «Մայրական սրտով Պատրիարք է պետք հայ ազգին»[2]:

Պապի մաղթանքը իրականանում է նոյեմբերի 30-ին: Ընտրական ժողովի հենց առաջին նիստի առաջին քվեարկության ավարտից հետո ներկաների ձայների մեծամասնությամբ, պատրիարք ընտրվեց Աղաջանյան եպիսկոպոս: «Պատրիարքական արժանապատուութիւնը՝ պատիւներու եւ ուրախութիւններու միջեւ տնկուած խաչ մըն է: Պատիւն ու փառքը Աստուծոյ կ'ուղղեմ, ուրախութիւնը ու մխիթարութիւնը կ'ուզեմ որ սիրելի ազգիս բաժին ըլլա: Իսկ խաչը, ամբողջ խաչը, եւ միայն խաչը՝ ինծի կվերապահեմ»,- անմիջապես ասաց Պատրիարք Աղաջանյանն ընտրությունից հետո[3]: Ապա իր Ֆրանցիսկոս անունը փոխարինեց Գրիգորով՝ ի հարգանք Գրիգոր Լուսավորչի:

---

[1] Հուշամատեան, Լեւոնեան հայ վարժարան, 1883-1958, էջ 122:

[2] Հռոմկլա, Թիվ 13, Հռոմ, 1967-1968, էջ 5:

[3] Նույն տեղում:

Սկսած Հայ կաթողիկե եկեղեցու առաջին պատրիարք-կաթողիկոս Աբրահամ Պետրոս Ա Արծիվյանից, գահակալել է 1740-1749 թթ., բոլոր հայ կաթողիկե պատրիարքները բացի իրենց անունից կրում են նաև Պետրոս անունը: Պատրիարքական աթոռին նա մնաց մինչև 1962 թ. օ-գոստոսի 25-ը:

Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանը քառասուն երկու տարեկան էր երբ ընտրվեց պատրիարք: Հայ եկեղեցու պատմության մեջ խիստ սակավ են այսքան երիտասարդ առաջնորդների ընտրությունը: Այսպես երիտա-սարդ տարիքում է նաև Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվել Վազգեն Ա վեհափառը, ով կաթողիկոս ընտրվեց քառասուն յոթ տարեկան հասա-կում և եղավ ժողովրդի ամենասիրելի կաթողիկոսներից մեկը: Նազլյան արքեպիսկոպոսը այս առիթով ասել է. «Պատրիարքական պատկառելի արժանապատուութիւնը Արհի. Աղաճանեան Գերապայծառին երիտա-սարդութեան միանալով՝ մեր Պատրիարքութեան վերստին երիտասար-դանալուն եւ վերանորոգումին ամէնէն բարեգուշակ գրաւականն է»: Պատմությունը ցույց տվեց, որ Նազլյան արքեպիսկոպոսը և նրան նման մտածողները չէին սխալվում: Չէին սխալվել նաև Աղաջանյանին լավ ծա-նոթ այլազգիները, օրինակ՝ Թուրքիայում պապական նվիրակ Պողոս Մարէլլա արքեպիսկոպոսը, Աղաջանյանին ուղղած իր նամակում գրում է. «Որքան մեծ հրճուանքով կարդացի այս առաւօտ թերթին մէջ Ձեր պատրիարք ընտրուելուն լուրը: Արդարեւ Աստուծոյ մատը կայ հոն՝ Հայ Եկեղեցւոյ յաղթանակին եւ անոր դարաւոր պաշտօնին համար Մերձա-ւոր Արեւելքի մէջ»[1]: Նորընտիր պատրիարքը իր առաջին հեռագիրն ուղ-ղարկում է Լևոնյան Վարժարանի սաներին. «Աչքերուս բիբերուն սիրա-լիր օրհնութիւն» ստորագրելով:

Նրա ընտրության մասին լուրը հրճվանքով է ընդունում նաև ծերու-նազարդ Պիոս ԺԱ-ն «մեծապէս երջանիկ կզգայ ինքնզինքը՝ տեսնելով իր սիրելի որդին՝ Աղաճանեանը, Կիլիկիոյ Աթոռը բարձրացած» ու անմի-ջապես վավերացնում է դեկտեմբերի 3-ի հեռագրով: Ապա ցանկություն է հայտնում տեսնելու Աղաջանյան պատրիարքին դեկտեմբերի 13-ին Վա-տիկանում սպասվելիք պապական խորհրդաժողովին:

Գերերջանիկ հայրապետը քսանհինգ տարի ամենայն վերահասու-թյամբ կատարեց իր համայնքի պատրիարքական կառավարումը: Այդ տարիների ընթացքում նա մեծագույն ներդրում ունեցավ հայ կաթողիկե եկեղեցու և հայության բարգավաճման համար: Այդ քսանհինգ տարինե-

[1] Նույն տեղում, էջ 6:

րի ընթացքում նրա կատարած գործունեությունը կարելի է պայմանականորեն բաժանել երեք շրջանի: Առաջին շրջանը 1937-1945 թթ. է: Երկրորդ շրջանը 1946-1955 թթ. համեմատաբար ավելի իրադարձություններով լի էր կապված հատկապես կարդինալական տիտղոսի ստացման հետ: Կարդինալական տիտղոսի շնորհումից հետո, նրա գործունեությանը ավելի լայն հնարավորություններ տրվեցին, ինչը նա օգտագործեց հայության բարօրության համար: Այս շրջանն նաև կապված է հայրենադարձության կազմակերպման հետ առաջ եկած նրա տարակարծության հետ, որի առիթով նա բազում քննադատությունների ենթակվեց, չնայած կային նաև կարդինալի մոտեցումներն այդ հարցում նաև անձնվիրաբար պաշտպանողներ:

Երրորդ շրջանն ընդգրկում է 1955-1962 թթ.: Այս ընթացքում թեպետ շարունակում էր ծառայել իր համայնքին, այնուհանդերձ Աղաջանյան պատրիարքի ծառայությանը շուտով տրվում է միջազգային բնույթ՝ նշանակվելով Հռոմեական եկեղեցու Հավատի տարածման հանձնախմբի նախագահ:

Աղաջանյան պատրիարքի պատրիարքության երկու տարին դեռ չբոլորած նա կազմակերպեց հիշատակել 1915 թվականի Հայոց եղեռնի զոհերի հիշատակը: 1939թ. ապրիլի 23-ին Բեյրութում, Պատրիարքարանի գավաթում Աղաջանյանի հանձնարարականով կանգնեցվում է 1915 թ. ապրիլյան նահատակների հուշարձանը: Այդ իրադարձությանը ներկա են եղել մոտ 7000 հյուրեր: Հուշարձանի բացման և օրհնության ժամանակ Աղաջանյանը ասում է. «Սիւնը կը խորհրդանշէ մեր Ազգը, Հայրենի աշխարհը, որուն փուշերն անգամ մեզի համար վարդեր են, որուն կարոտն կը մաշէ մեր հոգին :... Ով հայ ժողովուրդ, դուք, մանաւանդ երիտասարդներ, ժպիտ ու յոյսը ազգին ... կոթողացուցէք ձեր հոգիները ամէն վիատութեան, ուծացումի դեմ, ուխտեցեք, որ պիտի մնաք միշտ հաւատարիմ այս նուիրական գաղափարականներում, որոնց համար մեր խնկելի նահատակները զոհուեցան, յերկրե յերկին պսակուեցան: Մնալով հաւատարիմ հիւրընկալ երկրներում օրինակելի ձեր աշխատութեամբ, փոխադարձ սիրով միությամբ բարձր պիտի պահէք դրոշակը քրիստոնեա հավատքին եւ հայրենասիրական մաքուր հոգիին»[1]: Կոթողի վրա քանդակագործ արձանագրությունն ասում է. «Ի ԻԵ տարկեանի նահա-

[1] **Մաթևոսյան Լ.**, Ախալցխայի հայկական դպրոցը, Երևան, 200, էջ 160:

տակութեան Ազգիս Հայոց 1915-1939 կանգնեցաւ ուխտանուէր այս յուշարձան, որ ընդ հուանեաւ Ս. Խաչին ունի գթեկեալն Հայրենի աշխարհ»: Նրա այս որոշում և պետության կողմից հուշարձանի կառուցման թույլտվությունը պետք է արժևորել և գնահատել:

Հովվական առաջին այցելություն: Աղաջանյան պատրիարքը 1941-1945թթ. կատարեց մի շարք հովվական այցելություններ Միջին Արևելքի հայ գաղութներ՝ Սիրիա, Եգիպտոս, Իրաք և Պաղեստին: Նա ընդառաջելով Հալեպի Հայ կաթողիկե վիճակավոր՝ Գրիգոր արքեպ. Հինտիեյի հրավերը 1941 թ. հոկտեմբերի 22-ին ժամանում է Հալեպ Հայ կաթողիկե Աթոռանիստ եկեղեցու 100 ամյա հանդիսությունները կատարելու համար:

Հիշատակի եկեղեցական արարողությունները տևում են մինչև հոկտեմբերի 27-ը: Այնուհետև նա ընդունում է տեղի եկեղեցական, քաղաքական իշխանությունների ներկայացուցիչներին և հավատացյալներին: Ապա ինքն է այցելում տեղի վարժարաններն ու դպրոցները: Հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 7-ը պատրիարքը այցելում է Եղեռնից մազապուրծ եղած հայերին, ովքեր ապրում էին Դեր-զորում, Հասիչեյում, Ամուտայում,- Հելդոյում: Նոյեմբերի 7-ին նա հասնում է Դամասկոս, որտեղ այցելում է Սիրիայի նախագահին:

«1943 ին կ'այցելէինք Պաղեստին, իբր ուխտաւոր նուիրական աստուածակոխ տեղեաց եւ կ'ուրախանայինք մանաւանդ ի տես՝ յատուկ եւ իմաստուն գուրգուրանքին առարկայ մեր սրբավայրին յԵրուսաղէմ, ուր կը պահուի յիշատակը Խաչի ճանապարհի երրորդ եւ չորրորդ կայաններուն»[1]:

Պաղեստինից հետո նա անցնում է Եգիպտոս: 1944 թ. փետրվարի 10-ին պատրիարքը ժամանում է Կահիրե: Հաջորդ օրն իսկ նա այցելում է Ֆարուք Ա թագավորին: Հաջորդ օրերին նա հանդիպում է նաև վարչապետին, բարեկամ երկրների դեսպաններին, հայ և օտար հոգևորականներին: Բացի Կահիրեից նա հանդիպումներ է ունենում նաև Հելիոպոլսում և Ալեքսանդրիայում: Տեղի հայ կաթողիկե համայնքներում պատարագ մատուցում և իր հայրապետական քարոզն ու հորդորն ուղղում հայ հավատացյալներին: Ինչպես արտացոլում է ժամանակի մամուլը, ամեն տեղ որտեղ այդ օրերին նա այցելություններ էր ունենում, բոլորը ջերմությամբ և խանդավառությամբ էին ընդունում նրան:

---

[1] Թուղթ հովուական, **Գրիգորի-Պետրոսի ԺԵ.ի Աղաճանեան**, 1947, Պեյրութ, էջ 6:

Բաղդադում նա հայ կաթողիկե Աթոռանիստ եկեղեցու 100 ամյակի առթիվ մասնակցում է կազմակերպված միջոցառումներին: Նա Իրաք է ժամանում 1944 թ. նոյեմբերի 23-ին Բաղդադի վիճակավոր Թայրոյան արքեպ. հրավերով, իսկ միջոցառումներն ավարտվում են նոյեմբերի 26-ին: Նույն օրը նա այցելում է Իրաքի թագաժառանգին, իսկ դեկտեմբերի 7-ին այցելում է Մուսուլ քաղաքի հայությանը: Նա Բաղդադում է մնում մինչև դեկտեմբերի 20-ը:

Երկրորդ հովվական այցելություն: Երկրորդ հովվական այցելությունը պատրիարքը սկսում է Կ. Պոլսից, որտեղի հայ կաթողիկե համայնքը վաղուց էր սպասում այս այցին: Կ. Պոլիս նա ժամանեց 1950 թ. օգոստոսի 16-ին: Կ. Պոլսում գտվելու 14 օրերի ընթացքում հանդիպումներ է ունենում դեսպանների, հոգևորականների, անգամ թուրք պաշտոնյաների հետ[1]: Կարդինալն այցելում է հայկական գերեզմանատները, մի շարք հայկական համայնքները և հայ կաթողիկե գրեթե բոլոր եկեղեցիները:

Կ. Պոլսից հետո 1950 թ. սեպտեմբերի 3-ին այց է կատարում Հունաստան՝ այստեղ ևս ջերմ ընդունելության արժանանալով: Աթենքում առաջնորդանիստ եկեղեցում պատարագ է մատուցում՝ իր վեհահունչ հայրական խոսքն ուղղելով տեղի հայությանը:

1950թ. դեկտեմբերի 5-ին երկրորդ անգամ է այցելում Եգիպտոս: Ալեքսանդրիայում կազմակերպված միջոցառումները չէին զիջում հունահայերի կազմակերպածին: Դեկտեմբերի 9-ին տեղի իշխանության և հոգևարականների հետ իրականացնում են Ալեքսանդրիայի նորակառույց Առաջնորդարանի շենքի բացումը: Հաջորդ օրը մեկնում է Կահիրե: Եգիպտահայության և օտարազգիների հիշողության մեջ տակավին թարմ էր նրա նախորդ այցելությունը, ուստի և շատերը ջանացին կրկին անգամ հանդիպումներ ունենալ Կարդինալի հետ: Դեկտեմբերի 17-ին Աղաջանյան Պատրիարքը կրկին այց է կատարում Եգիպտոսի թագավոր Ֆարուք Ա-ին մոտ՝ ներկայացնելով եգիպտահայերի հարգանքն ու նվիրվածությունը Եգիպտոսին: Կարդինալ Աղաջանյանն իր այցերի ժամանակ պատարագում և քարոզում էր գրեթե բոլոր կաթողիկե եկեղեցիներում՝ ամենուրեք կրկնելով իր պատգամը. «Հայե՛ր, զիրար սիրեցէք, որովհետեւ ամէն հայ Հայրենիքը կը պտըտցնէ իր մէջ»[2]:

---

[1] Հռոմկլա, Թիվ 13, Հռոմ, 1967-1968, էջ 13:

[2] Նույն տեղում, էջ 14:

Ֆրանսիայի կառավարության պաշտոնական հրավերին ընդառաջելով Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանը Պաթանյան գերապ.-ի և Հայր Ամատունու ուղեկցությամբ մեկնում է Փարիզ: Մեկ շաբաթ նա հյուրընկալվեց ֆրանսիական կառավարության կողմից, նրա նկատմամբ անսահման ուշադրության մասին է խոսում այն հանգամանքը, որ նա իջևանել էր «Կրիյոն» հռչակավոր հյուրանոցում, որտեղ հյուրընկալվում էին կառավարության կողմից հրավիրված այլ երկրների թագավորները, նախագահները և պետության առաջին դեմքերը: Բոլոր այդ օրերին նրան ուղեկցում էին Ֆրանսիայի Արտաքին Գործերի նախարարության ներկայացուցիչները: Նա այցելեց թե՛ հայ, թե՛ օտար կազմակերպություններ և հանդիպումներ ունեցավ բարձրաստիճան եկեղեցականների, պաշտոնյաների, տարբեր երկրների դեսպանների հետ: Հունիսի 22. նա հյուրընկալվեց Ֆրանսիայի նախագահ Վ. Օրիոլի մոտ: Հանդիպումը տևեց մեկ ժամ և ժամանակի լրագրողներն այն համարեցին ինչպես կաթոլիկ եկեղեցու հետ հարաբերությունների ամրապնդմանն ուղղված իրադարձություն, այպես էլ Ֆրանսիա և Հայաստան փոխհարաբերությունների բարելավվում[1]: Փարիզի քաղաքապետարանը մեծ ընդունելություն էր կազմակերպել նրա պատվին, հունիսի 26-ին հաջորդեց քաղաքի արքեպիսկոպոս Ֆելթինի կազմակերպած մեծ ճաշկերույթը, որին մասնակցում էին Ֆրանսիայի չորս կարդինալները և քսան արքեպիսկոպոսներ: Պետական մարմինները ևս շտապում էին ընդունելություն կազմակերպել նրա պատվին և Արտաքին գործերի նախարար Ռ. Շումանը հերթական մեծ ճաշկերույթը կազմակերպեց՝ պատվելու կարդինալ Աղաջանյանին: Այսպիսի բարձր ընդունելության կարևորագույն պատճառներից էր այն, որ կարդինալ Աղաջանյանն այդ ժամանակ Հավատո տարածման հանձնաժողովի նախագահն էր: Այդ բազմաթիվ հանդիսությունների շարքի, որ հայերը և ֆրանսիացիները կազմակերպեցին հայ կարդինալի պատվին դրանց մեջ առանձնակի ուշադրության է արժանի հունիսի 27-ի Ֆրանսիական համալսարանում տեղի ունեցած հանդիպումը: Այստեղի հայերի շրջանում հետևյալ ելույթով հանդես եկավ: Բերում ենք մի փոքրիկ հատված. «Ֆրանսիան սիրելով, կատարելով այսպէս ձէր պարտականութիւնը, անշուշտ պիտի չմոռանաք մեր հոյժ սիրելի Հայրենիքը Հայստանը: Հաւատարիմ մնացէք հայ ընքանիքին յատուկ գեղեցիկ ա-

[1] Հռոմկլայ, Թիվ 13, Հռոմ, 1967-1968, էջ 15:

ւանդութեանց, մեր լեզուին, մեր մշակոյթին, մեր Ս. կրօնքին: Հեռու մեզմէ որևէ հակառակութիւն՝ հանդեպ Հայրենիքին, զոր կը սիրենք ամբողջ սրտով եւ որուն համար պատրաստ ենք մեր կեանքն ալ զոհելուն»[1]:

Փարիզից հետո նա հունիսի 27- հուլիսի 9-ը այցելություններ կատարեց Ֆրանսիայի բոլոր հայաշատ կենտրոնները՝ Լիոն, Վալանս, Ավինյոն, Մարսել և Նիս: Ամենուրեք փառաշուք ընդունելություններ կազմակերպվեց նրա պատվին: Եվ այդ առիթով թե՛ ֆրանսիական, և թե՛ հայկական մամուլը բազմաթիվ հոդվածներով ներկայացրեցին հայ կարդինալի այցի մանրամասները: Հայ գրականագետ, գրական քննադատ, դրամատուրգ և բանաստեղծ Արշակ Չոպանյանն այս առիթով ասել է. «Վսեմաշուք Աղաճանեան Կարդինալին անցքը սոսկ Ֆրանսայէն՝ բաւեց սքանչելի կերպով իրագործելու այն՝ ինչ որ ես իմ երկար տարիներու գրական գործունէութեամբ չէի յաջողած ընել ի նպաստ Հայ անուան եւ մշակոյթին»[2]:

1951 թ. աշնանը կարդինալ Աղաջանյանն, ընդունելով ԱՄՆ Բոստոնի առաջնորդ կարդինալ Գուչիկինի հրավերը, առաջին անգամ մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Բոստոնի օդանավակայանում նրան դիմավորելու էին եկել ինչպես բարձրաստիճան կաթոլիկ հոգևորականները, այնպես էլ բազմաթիվ հայեր: Նույն թվականի նոյեմբերի 23-25-ը նա հյուր եղավ Պետերսոնի եպիսկոպոսին: Դետրոիդում նրան շքեղ ընդունելության արժանացրեցին, հատկապես նոր առաջնորդարանի շենքի բացման կապակցությամբ:

Դեկտեմբերի վերջին նա այցելեց նաև Ֆիլադելֆիա, որտեղ էլ կատարեց այնտեղ կառուցված սբ. Մարկոսի եկեղեցու օծումը: ԱՄՆ-ում նա հանդիպումներ ունեցավ նաև Ֆրեզնոյում: ԱՄՆ-ից հետո հովվական այց է կատարում նաև Կանադա: Այդ երկու այցելությունների ընթացքում հանդիպումներ է ունենում երիտասարդների և ուսանողների հետ հիսունից ավելի համալսարաններում և քոլեջներում, բոլոր դեպքերում նրանց հասու դարձնելով հայ ազգի պատմության որոշ էջերի և քրիստոնյա ազգին: Մեկ ու կես ամսում նա անցավ հազարավոր կիլոմետրեր ԱՄՆ-ից դեպի Կանադա, բոլոր տեղերում բարձր հարգանքի և ընդունելության արժանանալով թե՛ հայ, թե՛ այլազգիների կողմից: Նա իր այցելությունն-

---

[1] Հռոմկլա, Թիվ 13, Հռոմ, 1967-1968, էջ 16:

[2] Նույն տեղում:

րի ընթացքում ձեռք էր բերում մեծ ճանաչում և հեղինակություն, ինչն էլ հետագայում պիտի պայմանավորեր այն հանգամանքը, որ հետագա պապական ընտրությունների ժամանակ նա պիտի դառնար ամենահնարավոր պապական թեկնածուն (papabil):

Երրորդ հովվական այցելությունը Միջին Արևելք

1951 թ. Հորդանանի Թալալ Ա թագավորի հայրը՝ Աբդալահ Ան-ն կարդինալ Աղաջանյանին պաշտոնապես հրավիրում է իրենց երկիր: Այդ հրավերն ընդունելու և Ամմանի հայ կաթողիկե նորաշեն եկեղեցին օրհնելու նպատակով նա մեկնում է Հորդանան՝ Ամման, 1952 թ. մայիսի 10-ին: Նրա գրեթե բոլոր ճանապարհորդությունների ընթացքում իրեն ուղեկցում էր Պատրիարքական փոխանորդ Ա. արք. Պաթանյանը: Մայիսի 11-ին նա հայազգի և տեղաբնիկ ժողովրդի ներկայությամբ օծում է Ամմանի Աստվածածնի Վերափոխման եկեղեցին, որին հաջորդում է հայրապետական պատարագը: Հաջորդ օրը նա հանդիպումներ է ունենում Թալալ Ա թագավորի և վարչապետ Թուֆիք Ապուլ Հուդայի հետ: Մայիսի 13-ին նա մեկնում է Լիբանան:

1954 թ. նոյեմբերի 18-ին մեկնում է Թեհրան՝ տեղի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման և Աբգարյան վարդապետին եպիսկոպոսական օծման համար: Պարսկահայ համայնքը վաղուց էր սպասում նրա այս այցին: Հավատացյալ ժողովրդի և պաշտոնյաների հետ հանդիպումների ավարտից հետո նա նոյեմբերի 25-ին հանդիպում է ունենում Իրանի վերջին շահ Մոհամեդ Ռեզա Փեհլևիի հետ: Թեհրանի ՛հանդիպումներից հետո նա մեկնում է ողջունելու Սպահանի և Նոր- Ջուղայի հայերին՝ պատարագ մատուցելով տեղի եկեղեցիներում:

1955 թ. հուլիսի 18-24-ը տեղի է ունեցել Ամենասուրբ հաղորդության միջազգային ԼՋ համաժողովը Բրազիլիայի Ռիո Դե Ժանեյրո քաղաքում: Բրազիլիայի հայ կաթողիկե գաղութի մասնավոր հրավերով Ռիո Դե Ժանեյրո է մեկնում: Ռիոյի կաթոլիկ Կանդելարիա եկեղեցում նա պատարագ մատուցեց, որին մասնակցում էին տեղի հայ համայնքի ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ և հոգևորականներ: Այդ պատարագը հեռարձակվեց տարբեր ռադիոկայաններով: Նա Բրազիլիայում երկու անգամ մասնակցեց երկրի նախագահի հետ ճաշկերույթի: Ռիո Դե Ժանեյրոից հետո մեկնեց Սան Պաուլո, որտեղի հայ համայնքը ևս տեղի պետական կառույցների հետ ջերմ ընդունելություն ցույց տվեցին: Այստեղ ևս

պատարագ մատուցվեց, որը ևս հեռարձակվեց ռադիոկայաններով: Բրազիլիա այցից հետո օգոստոսի 5-ին նա մեկնեց Ուրուգվայ՝ Մոնտևիդիո:

Այցելություն Սիրիա և հայ գաղութներ

1955 թ. հոկտեմբեր 21 - 25ը կարդինալ Աղաջանյանի երկրորդ այցելությունը Սիրիրա դարձավ կարևորագույն տարեթիվ տեղի հայ համայնքի համար: Հայազգի կարդինալի պատվին կատարված քաղաքական, զինվորական, ժողովրդական և եկեղեցական հանդիսություններից բացի, Սիրիայի հանրապետության նախագահը՝ Շուքրի Քուաթլին նրան արժանացրեց սիրիական արժանավորների բարձրագույն շքանշանին, ասելով «Վսեմաշուք Տէր, մենք կը ճանաչնանք եւ կը գնահատենք Հայ ժողովուրդը, անոր պատուասիրութիւնը ու աշխատասիրութիւնը: Անոր հետ մենք ալ սեւ օրեր անցուցինք, լացի գիշերներ ունեցանք»[1]: Այս հանդիպումը դեռ երկար պիտի լուսաբանվեր և վերլուծվեր ժամանակի լրագրողների կողմից, և այժմ էլ այս դեպքերն աղերս ունեն ուսումնասիրվելու քաղաքական-եկեղեցական տեսանկյունից:

Նրա պաշտոնավարության շրջանում է, որ Ալեքսանդրետը կցվեց Թուրքիային, և տեղի հայությունը լքում էր իր հայրենի բույնը: Աղաջանյանը մի կողմից ստանձնել էր վտարանդի ժողովրդի խնամատարությունը՝ նրանց տեղավորելով Այնճարում և Ռաս-ուլ-այն (Տյուրոսի մոտ), և միաժամանակ բնակարաններ, եկեղեցիներ և դպրոցներ էր ապահովում գաղթականների և տեղի հայության համար: Պապի միջնորդությամբ նրան հաջողվում է փրկել Քեսապի հայությանը՝ թողնելով այն Սիրիայի հանրապետության կազմի մեջ: «Սրբազան Քահանայապետին ազդու միջամտութիւնը, որուն պատճառ եղան Սուրիոյ եւ Լիբանանի Առաքելական Նուիրակութիւնը եւ Պատրիարքարանս, խնայեց Քեսապի հայաբնակ եւ սիրելի շրջանին՝ գաղթականութեան աղէտը: Քեսապ շարունակեց մնալ կցուած Սուրիոյ Հանրապետութեան»[2]: Բեյրութում՝ Անդրնահարում կառուցվում են նոր դպրոցներ՝ Մեսրոպյան վարժարանը՝ տղաների, և Ս. Ագնեսը՝ Անարատ հղության քույրերի ղեկավարությամբ, աղջիկների համար «կարողացան պատսպարել մինչեւ 1500 եւ աւելի սան-սանուհիներ»[3]: Զմմառի վանքում կառուցվում է հայկական ոճով գեղեցիկ մա-

---

[1] Հռոմկլայ, Թիվ 13, Հռոմ, 1967-1968, էջ 20:

[2] Թուղթ հովուական, **Գրիգորի-Պետրոսի ԺԵ.ի Աղաճանեան**, 1947, Պեյրութ, էջ 5:

[3] Նույն տեղում:

տուռ և հիմնովին վերանորոգվում է վանքի հյուսիսային թևի գլխավոր մասը՝ հատկացված պատրիարքի բնակության, եպիսկոպոսների և վարդապետների համար:

1945 թ. Հռոմ այցելության ժամանակ տեսնում է արդեն նորավարտ Լևոնյան վարժարանի հոյակապ շենքը: Իր ձեռքով և բարերարների միջնորդությամբ Զմմառի բլուրներից մեկի վրա կառուցում են Անարատ հղության մայրապետների կենտրոնական վանքը: Այս ամենը իրականացվում է 1937-47 թթ.[1]: Իր հովվական թղթում 1947 թ. նա իր երախտագիտությունն է հայտնում բոլոր բարերարներին. «Մինչ կը յիշենք այս կառուցումները, փառք տալէ ետք Աստծոյ, կը բաղձանք կրկին յայտնել մեր հայրական երախտագէտ զգացումները բոլոր բարերարներուն եւ զանազան եղանակներով աջակիցներուն, որոնց վարձահատոյց ըլլայ ինք Աստուած «հարիւրապատիկ աստ եւ ի հանդերձելումն»»[2]:

Վերոհիշյալին հաջորդում է Ամմանի եկեղեցին և դպրոցը՝ 1952 թ., Բեյրութի Ս. Փրկիչ եկեղեցին՝ 1953 թ., Թեհրանի հայ կաթողիկե եկեղեցին և Աղաջանյան սրահը՝ 1954 թ.: 1956 թ. տեղի ունեցավ Բեյրրութի Աթոռանիստ եկեղեցու հիմնարկումը և 1959 թ. հունվարի 4 եկեղեցու օծումը, որի ժամանակ Աղաջանյանն իր քարոզում նշում է. «Այս խորհրդածութիւնները կը մղեն զմեզ նկատելու՝ յոգնութեան արդիւնք եւ ուրախութեան պատճառ այս Աթոռանիստ եկեղեցին, խորհրդանշան մը, կոթող մը: ...Կը բաղձանք որ ան վառ պահէ ձեր մէջ պանծալի յիշատակն այնքան մարտիրոսներու, հաւատքի խոստովանողներու եւ ազգային հերոսներու, որոնք գիտցան իրենց կեանքը զոհել Աստուծոյ եւ հայրենիքի համար»[3]:

Ծանրաբեռնված լինելով նաև հռոմեական եկեղեցու քահանայապետի կողմից իրեն տրված պաշտոնով, Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանը, իր թեմի կաթողիկոսարանի աշխատանքները անխաթար շարունակելու համար 1959 թ.-ին իրեն տեղակալ է նշանակում Արհի. Ալոզիոս Արք Պաթանյանին:

Պատրիարքության հետ համատեղել իրեն վստահված բոլոր պաշտոններ շատ դժվար էր: 1962 թ. իր կաթողիկոսության քսանհինգամյա-

---

[1] **Աղաճանեան Կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ**, Ձայն հովուական, Վենետիկ 1967, էջ 4, 24-26, 58:

[2] Թուղթ հովուական, **Գրիգորի-Պետրոսի ԺԵ.ի Աղաճանեան,** 1947, Պեյրութ, էջ 5:

[3] Նույն տեղում, էջ 399:

կին նա ստիպված է լինում հրաժեշտ տալ պատրիարքության պաշտոնին: Ահա իր մեկնաբանությունն կապված իր որոշման հետ. «Երբ, 15 Յունիս 1958ին, երջանկայիշատակ Պիոս ԺԲ Սրբազան Քահանայապետը կը բարեհաճէր յանձնել մեր տկարութեան՝ վարչութիւնը Հաւատոյ Տարածման Ս. Ժողովին, Յաւիտենական քաղաքին մէջ, զգացինք որ վախճանը եկած էր մեր Պատրիարքական Պաշտոնին: Ինչպէս ծանօթ է, Պատուական Եղբարցդ, շարունակեցինք, Նորին Սրբութեան յոյժ փափկանկատ կարգադրութեամբ, ժամանակ մը եւս պահել վերին պատասխանատուութիւնը Պատրիարքութեան, յանձնելով ասոր անմիջական վարչութիւնը, մեր տեղը եւ մեր անունով, մեր սիրելի եղբայրակից եւ Ընդհանուր Փոխանորդ Արհի. Ալոզիոս Արքեպիսկոպոս Պաթանեանի: Նորին Արհիապատուութիւնը, թանկագին օժանդակութեամբ սիրելի եղբայրակից եւ Կաթողիկոսական Թեմիս Ընդհ. Փոխանորդ Արհի. Սահակ Եպս. Կոգեանի, վարեց բոլոր գործերը ծանոթ ձեռնահասութեամբ եւ օրինակելի անձնուիրութեամբ, ի գոհունակութիւն մեր եւ ամէնուն:

Այս արտակարգ կացութիւնը չէր կրնար եւ պէտք չէր երկարել անորոշ ժամանակաւ: Տարիները անցնելով, միշտ աւելի ստիպողական կ'երեւար մեր խղճին առջեւ պարտականութիւնը հրաժարելու Կաթողիկոս-Պատրիարքի պաշտօնէն:

Եւ յիրաւի, կը նկատէինք, մէկ կողմէն, տիեզերածաւալ գործը Հաւատոյ Տարածման Ս. Ժողովին, որուն վերջնականապէս լծուած էինք, Սրբազան Քահանայապետի անդառնալի կամքով, եւ Հռոմէական ուրիշ զանազան Ս. Ժողովներու անդամակցութեան յարակից այլ հոգերը, որոնք կը պահանջէին բոլոր մեր ժամանակը եւ ամբողջ մեր ուժերը, պարտադրելով միանգամայն տեւողական մեր ներկայութիւնը Յաւիտենական Քաղաքին մէջ: Կ'անդրադառնայինք, միւս կողմէն, որ մեր սիրելի Հասարակութիւնը պէտք էր վայելել, ինչպէս Արեւելքի միւս Համայնքները, իր Հոգեւոր Պետին գործօն եւ իրական ներկայութիւնը իր Աթոռին վրայ, եւ անոր անմիջական հեղինակաւոր հոգն ու հոգածութիւնը՝ ըստ կանոնաց:

Տարւոյս Զատկական Տօները անցուցինք Լիբանան, կատարելով հովուական այցելութիւն մը, որ մեր մտքին մէջ, հրաժեշտի այցելութիւն մըն էր: Մխիթարուեցանք եւ մխիթարեցինք մեր սիրելի Կղերը, Հաստատութիւնները, եւ Հաւատացեալները, Ս. Պատարագաց մատուցմամբ, սրտաբուխ քարոզութեամբ եւ սիրալիր հանդիպումներով նաեւ տեղական հոգեւոր ու պետական Իշխանութեանց հետ:

Հռոմ վերադառնալով, հասուն էր այլեւս մեր որոշումը: Ուստի, պատշաճ ժամանակին, ներկայացուցինք մեր հրաժարականը Ս. Քահանայապետին, որ հաճեցաւ զայն ընդունիլ եւ հրամայել, որ օրէնքի տրամադրութեանց համաձայն, ձեռնարկուի նոր Կաթողիկոս-Պատրիարքի ընտրութեան:

Երբ այժմ հրատարակուած են այս կարեւոր որոշումները, կու գանք, ներկայ թղթովս, սրտի խոր կարօտով ու ցաւով, հրաժեշտ առնելու, իբր Կաթողիկոս-Պատրիարք, Ձեզմէ, Արհիապատիւ Եղբարք, Պատուական եկեղեցական Դասէն եւ սիրելի ժողովուրդէն... »[1]: Նա նաև ավելացնում է. «Թեեւ չունինք այլեւս պատրիարքության անմիջական պատասխանությունը, սակայն անփոփոխ կը մնան մեր սէրն ու փարումը մեր պատուական հասարակութեան եւ նահատակ Ազգին հանդէպ, եւ կամքը անոնց ծառայելուն»[2]:

Կան գործեր, որ անմահացնում են իրենց հեղինակներին: Այդպիսի աչառու ձեռնարկներից մեկն էլ Զմառռի ընծայարանն է, որը կառուցվել է կարդինալ Աղաջանյանի կողմից՝ ի հիշատակ իր մոր՝ երջանկահիշատակ Իսկուհի Աղաջանյանի: Ընծայարանի հինարկեքը տեղի ունեցավ մայիսի 28-ին 1961 թ. այդ ժամանակ դեռևս պատրիարքական տեղապահ Ալոզիոս արք. Պաթանյանի, երբ կարդինալ Աղաջանյանը Կիլիկիայի կաթողիկոս-պատրիարքն էր: Շինության բացումը տեղի ունեցավ 1963 թ. հուլիսի 7-ին, որին մասնակցեց Եղիսաբեթ Աղաջանյանը[3]՝ կարդինալի քույրը, ով Հռոմ իր եղբոր մոտ էր եկել մեկ տարի առաջ: Բացման կապակցությամբ շնորհավորական հեռագրեր էին հղել Պողոս Զ պապը և կարդինալ Աղաջանյանը. «Հոգւով ներկայ. նաեւ բարի քրոջս միջոցաւ՝ բացման հանդէսին նոր Կղերանոցին, ի յիշատակ ամենաքաղցր մօրս, բազմագեղ սիրով կ'ողջունեմ Ձեզ եւ բոլոր հանդիսականները եւ ջերմապէս կը հայցեմ Աստուծմէ եւ Ս. Աստուածածնէն որ անի թիւը եւ եռանդը զոհաբերումի հոգիի պատանիներուն. որոնք կը կազմեն յոյսը Ս. Եկեղեցւոյ ի փրկութիւն մեր Ազգին»[4]:

---

[1] Հրաժեշտի խօսք (Հռոմ, 20 օգոստոս, 1962), **Աղաճանեան Կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ**, Ձայն հովուական, Վենետիկ, 1967, էջ 473-474:

[2] Ավետիք, 1962 թիվ 9-10, էջ 133 :

[3] Եղիսաբեթ Աղաջանյանին մտերիմները կոչել են Լիզա Աղաջանյան, և երբեմն պաշտոնական ամսագրերում, թերթերում գրում էին Լիզա:

[4] Ավետիք, մայիս-օգոստոս, 1963, էջ 83:

Այսպիսով Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանի պատրիարքական գործունեության արդյունքում, նա բազմաթիվ հանդիպումներ է ունեցել մի շարք պետությունների առաջին դեմքերի, հոգևոր առաջնորդների և այլ պետական այրերի հետ: Պատրիարքությունից նրա հրաժարականը կարդինալը, ինչպես տեսանք, պայմանավորում էր Հռոմեական եկեղեցու Հավատի տարածման հանձանաժողովի նախագահի պաշտոնի հետ անհամատեղելիությունը՝ գտնելով, որ հայ կաթոլիկ համայնքը արժանի է իրենց կողքին հայրապետի անընդհատ ներկայությունը: Կարծում ենք, որ այս քայլը նա նախապատրաստել էր մի քանի տարի առաջ արք. Պաթանյանին իրեն տեղակալ նշանակելով՝ աստիճանաբար պատրաստելով իրեն հաջորդ: Պատրիարքության տարիների այցերին հետագայում ավելացան նաև նրա՝ Կաթոլիկ եկեղեցում Հավատի տարածման հանձնաժողովի նախագահության ընթացքում ի պաշտոնե կատարած այցերը, որոնք մեծ ճանաչում ու սեր բերեց հայազգի հոգևորականին:

ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԺԵ ԱՂԱՋԱՆՅԱՆՆ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ

Լիլիթ Պողոսյան

Բանալի բառեր՝ *կաթոլիկ եկեղեցի, հայ կաթոլիկներ, կաթողիկոս-պատրիարք, ընտրություն, հովվապետական այցելություններ*

Հոդվածը վերաբերում է Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանի Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք ընտրվելու և նրա պատրիարքական գործունեությանը: Պատրիարքը քսանհինգ տարի ամենայն վերահասությամբ կատարեց իր համայնքի պատրիարքական կառավարումը և 1962 թ. հրաժարական տվեց՝ ծանրաբեռնված լինելով Հռոմի Պապի կողմից նշանակված նոր պաշտոնով: Հոդվածում նկարագրված են պատրիարքական այցելությունները, որոնք մենք պայմանականորեն բաժանել ենք երեք փուլերի: Պատրիարքական այցելությունների ընթացքում նա հանդիպումներ է ունեցել մի շարք երկրների առաջին դեմքերի և հոգևոր առաջնորդների հետ: Պատրիարքությունից նրա հրաժարականը կարդինալը, ինչպես տեսանք, պայմանավորում էր Հռոմեական եկեղեցու Հավատի տարածման հանձանաժողովի նախագահի պաշտոնի հետ անհամատեղելիությունը՝ համարելով, որ հայ կաթոլիկ համայնքը արժանի է իրենց կողքին հայրապետի անընդհատ ներկայությունը: Այդ տարիների ընթացքում նա մեծագույն ներդրում ունեցավ հայ կաթոլիկ եկեղեցու և հայության համար:

ГРИГОРИЙ-ПЕТРОС XV АГАДЖАНЯН – ПАТРИАРХ АРМЯНСКОЙ КАТОЛИЧЕСКОЙ ЦЕРКВИ

Лилит Погосян

Ключевые слова: *Католическая церковь, Армянские католики, Католикос-Патриарх, выборы, посещение*

Статья посвящена избранию Григория-Петроса XV Агаджаняна на Патриарший престол и его патриаршеской деятельности. Преданно исполнив духовное руководство своей общины в течение двадцати пяти лет, в 1962г. он подал в отставку по причине приказа Римского Папы о его новом назначении. В статье описаны его патриаршие визиты, которые условно разделены нами на три этапа. В ходе патриарших визитов он провел ряд встреч с первыми лицами и духовными лидерами разных стран. Кардинал обуславливал свою отставку несовместимостью занимаемой должности со службой префекта Конгрегации по распространению веры, считая, что армянская католическая община нуждается в постоянном присутствии патриарха.

GRIGOR-PETROS XV AGHAJANYAN AS THE PATRIARCH-CATHOLOCOS OF THE ARMENIAN CATHOLIC CHURCH

Lilit Poghosyan

Key Words: *Catholic Church, Armenian Catholics, Catholicos-Patriarch, election, visits*

The article considers both the election process of Grigor-Petros Aghajanyan as the Patriarch of the Armenian Catholic Church and the Patriarchal activities carried out by him. For 25 years he brought his Patriarchal services to the community and congregation and those years were embedded with great love and devotion towards the believers. In 1962 he resigned from the position due to the new appointment by the Pope. The new position appeared to be full of various tasks to be fulfilled. The article focuses on the descriptions of the Patriarchal visits that are conditionally decided into three phases. During those visits he held meetings both with the first leaders of many countries and the spiritual leaders. The article also puts the stress on the fact that The Catholikos -Patriarch's efforts were not spent in vien, approving the fact that the Armenian Catholic community really deserves to have its place among the big Catholic community.